

Է Հ Մ Ի Ա Ռ Ն Ա Կ Ա Ն Թ Ա Ր Ա Կ Ա Ն Բ Ի Ւ Ն Ե Բ  
(Ս Ե Պ Հ Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն Բ Ի Ո Ւ Ն Ա Կ Ա Ն Բ Ի Ո Ւ Ն , Ի )

Ա.

Ազգային-եկեղեցական ժողովը Դերասոյն Հոգեւոր Խորհրդի մայյուն հոգեւորական անդամներին յանձնարարել էր իւր նիստերին մասնակցութեան հրաւիրել կաթուղիկոսական պատգամաւորներից հետըգհետէ երկերկու հոգի հերթով, աշխարհիկ տարրի ներկայութիւնը ապահովելու համար, զործնականապէս դժուար համարելով մշտական անդամների առկայութիւնն էջմիածնում: Ինչ ինչ պատճառներով միայն ներկայ թուականի մայյիսին հնարաւոր եղաւ իրագործել այդ ցանկալի որոշումը, առաջին հերթին հրաւիրուցան Ազգային-եկեղեցական ժողովի ատենապետութեան երկու անդամները՝ Ստեփան Մալխատսեան և Կոստանդին Դիւնազարեան:

Առաջին նիստին նախագահեց և ժողովը բաց արեց Սրբազնագոյն կաթուղիկոսն անձամբ, պարզելով ներկայ նստաշրջանի բնոյթը, և թուելով այն խնդիրները, որոնք քննութեան նիւթ պիտի լինին. օրհնեց բոլոր անդամներին և մաղթեց արդիւնաւոր աշխատակցութիւն: Սպանախագահութիւնը յանձնելով Տ. Գարեգին արքապիսկոպոսին, հեռացաւ իւր առանձնարանը: Թէև Ն. Սրբութիւնը ներկայ չերնիստերին, բայց նախագահողը ամենայն նիստից յետոյ, ներկայանում է իւր ընկերների կողմից և զեկուցանում նիստերի ընթացքի և որոշումների մասին և յաճախ ցուցումներ ստանում քննուած կամ քընութիք հարցերի առթիւ:

Դերագոյն Հոգեւոր Խորհուրդը սովորական և առօրեայ խնդիրներից զատ՝ վեց նիստի մէջ զբաղուցեալ յատկապէս այն կարեւոր հարցերով, որ յանձնարարուած էր նորան Ազգային-եկեղեցական ժողովի կողմից, այն է ներկեցական նոր Սահմանադրութեան, Բարեփոխութեան, Մ. Աթոռի տնտեսական և այլ յարակից խնդիրներով, կարգի բերելով և ամփոփելով եղած նիւթերը, որ հաւաքուած էին Ազգային-եկեղեցական ժողովի գումարումից

առաջ, և որոնցով զբաղուելու և որոշումներ անելու հնարաւորութիւն չունեցաւ, այլ միայն ցուցումներ տուաւ Գերազոյն Հ. Խորհրդին կարգաւորելու, մշտիկիլու և լնթացք տալու:

Դերագոյն Հ. Խորհրդի մնայուն անդամները նախ հարկ համարեցին իրենց նոր աշխատակիցներին իրազեկ զարձնել 1½ տարուայ զործունէութեան և ապա անցնել խնդիրների քննութեան: Այդ պարտականութիւնը յանձնուած էր Տ. Գարեգին արքապիսկոպոսին: Սպահական հետական եղած նիւթերի հիման վերաց կազմուեցան Սահմանադրութեան և Բարեփոխութեան նախագերը, որ Ազգային-եկեղեցական ժողովի որոշման համաձայն պիտի ուղարկուին հայոց եկեղեցու նուիրապետութեան բարձր ներկայացուցիչներին և առաջնորդներին իրենց կարծիքները յայտնելու, յապաւումներ կամ յաւելումներ անելու, որից յետոյ միայն վերջնական խմբագրութեան կ'ենթարկուին, առաջարկելու զալիք Ազգային-եկեղեցական ժողովին ի հաստատութիւն:

Ներկայ թղթակցութիւններով կամենում ենք ըստ էութեան, առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, մեր հաւատացեալներին և մտաւորականներին եւս մասնակից անել այդ նիստերում յարուցուած խնդիրների բովանդակութեան:

1

Դերագոյն Հ. Խորհրդի 1½ տարուայ զործունէութիւն մասին (քաղուած բառացի և երբեմ յապաւումներով բուն զեկուցումներից): — Ազգային-եկեղեցական ժողովի կողմից ընտրուած Դերագոյն Խորհուրդը իւր զործունէութիւնն սկսել է 1932 թ. նոյեմբերի 18-ին, նախագահ ներկայանալով ն. Սրբութեան և նորա հայրապետական օրհնութիւնն ստանալով: Զորս հիմնական անդամների՝ Գարեգին և Գէորգ

արքեպիսկոպոսների, Արտակ և Արսէն և պիոկոպոսների հետ հրաւիրուեցան և թեմակալ առաջնորդները իշմիածնում եղած ժամանակ, համաձայն հանգուցեալ կաթողիկոսի Խորհրդի ծագման հետ կապուած կոնդակի և Ազգային-եկեղեցական ժողովի որոշման:

Պաշտօնական առաջին նիստից առաջ դեռ եւս Տ. Գարեգին արքեպիսկոպոսի ստորագրութեամբ, որպէս ընտրուած անդամներից աւագի, իւր պաշտօնակիցների զիտութեամբ հետագործ հազորդուած էր Ա. Հայրապետի ընտրութեան և օծման մասին Կիլիկիոյ Շնորհազարդ կաթողիկոսներին, Երուսաղէմի և Կ. Պոլսի պատրիարքներին, արտասահմանեան և Միութեան առաջնորդներին և կեղրոնական հոգեօր իշխանութիւններին. իսկ առաջին նիստում հրահանգուեցաւ զրաւոր ամենատեղ, յիշատակել նորընտիր կաթողիկոսի անունը մեր եկեղեցու մէջ ընդունուած աւանդութիւնների համաձայն. նոյն նիստում և որոշուեցաւ պատրաստել օրհնութեան անդրանիկ կոնդակը:

Իրեն ուրախալի և նշանակալից եւրեոյթ պէտք է նկատել, որ Ա. Հայրապետի ընտրութիւնը և Ազգային-եկեղեցական ժողովի արդիւնաւոր վախճանը արտաքոյ կարգի ոգեսորութեան և որդիական ջերմ զգացման ու հաւատարմութեան արտայայտութեան առիթ եղաւ աշխարհիս չորս կողմը ցրուած հայութեան համար դէպի Մ. Աթոռը և Հայրապետի անձը: Աչ միայն Կիլիկիոյ Շնորհազարդ կաթողիկոսների, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Ամենապատիւ պատրիարքների, առաջնորդների և կեղրոնական իշխանութիւնների և ամենատեսակ ազգային հաստատութիւնների կողմից, այլ և ամենահեռաւոր, աննշան անկիւններից եկած և Գ. Հ. Խորհրդի զիւանում զիկուած հեռագիրներն ու զրութիւնները, ուրախութեան, ջերմ սիրոյ և հաւատարմութեան զգացումներով ցողուած, ապացոյ ևն, թէ հայ ժողովուրդը շատ թանգ է գնահատում հայրապետական Աթոռը և նորա մէջ տեսնում իւր միութեան սրբազան նշանակը, նուիրագործուած դարերի պատմութեամբ և աւանդութիւններով:

Բայց լուսաւորչի յաջորդի ընտրու-

թիւնը և սկզ քողի բարձումը նորա աշխատակութեամբ վերաբերութեան և շնորհաւորութիւնների առիթ էր և քրիստոնէական եկեղեցիների ներկայացուցիչներից շատերի կողմից . ինչպէս մըր զարաւոր դրացի և բարեկամ զրացի ժողովովից Շնորհազարդ Կալիստրատ կաթուղիկոսի, Աւելիայնական եկեղեցու պետիմէն արքեպիսկոպոսի, Անգլիական եպիսկոպոսական եկեղեցու գլխաւոր Քէնաւըրրիի արքեպիսկոպոսի, Զիրարարդարի եպիսկոպոս Բիթուտոնի, Ամերիկական եպիսկոպոսական և բողոքական եկեղեցիների ներկայացուցիչներից, ինչպէս Նիւ-Եորքի արքեպիսկոպոս Զէմս Հենրիի, Զիքակոյի եպիսկոպոս Զորջ Կրէյդ Ստիւարտի, Վաշինգտոնի եպիսկոպոս Զէմս Ֆրիմանի, Սաքոնիայի Պրինց Կաթողիկ քահանայ և ուսուցչապետ Մաքսի, Ժննեւի բողոքական պատոր և որբախնամ Կրաֆտ Բանարի և այլն: Այս որոշուն և. Սրբութեան կողմից ուղարկուած է պարաւոպատշաճ պատասխան, և առհասարակ և. Սրբութեան ցանկութիւնն է եղիլ ոչ մի թուղթ չթողնել առանց պատասխանի, իրեւ միջոց կենգանի կապ պահելու հաւատացեալ և հաստրակական զիրք ունեցող անհատների, համայնքների, հաստատութիւնների և մեր հեռաւոր հատուածների հետ: Ա. Հայրապետն իսկ իւր բազմաթիւ ըրջարերական և մասնաւոր բնոյթ կրող կոնդակներով աշխատել է աւելի զօրացնել այդ կապը և կենդանացնել սէրն ու զիտակցութիւնը դէպի Մ. Աթոռն ու մեր բնիկ երկրը, յորդորելով յուղղութիւն և ի զգաստութիւն այն դէպքերում, երբ կուսակցական նեղ պայքարներով սխալներ կամ շեղումներ են կատարուել:

Հնց առաջին նիստերից հիմնական անդամների մէջ որոշուել են մի տեսակ աշխատանքի բաժանման և զեկավարութեան ըրջաններ. Վեհափառ Հայրապետի հաճութեամբ Տ. Գարեգին արքեպիսկոպոսնախագահող նիստերի. Տ. Գէորգ արքեպիսկոպոս իրեւ և. Սրբութեան ներկայացուցիչ և բանակցող պետական-կառավարական ըրջանների հետ. Տ. Արտակ ևպիսկոպոս գանձապահ և հայրապետական թեմի ներկայացուցիչ Երեանում. Տ. Արսէն եպիսկոպոս իրեն վերապատրիչ և ան-

միջական հսկող գանական կառավարութեան ծախսերի և գործառնութեան Այս մէկ ու կէս տարուայ ընթացքում ֆերազոյն Խորհուրդը 103 պաշտօնական նիստ է ունեցել և գրադուել է հեկեցու ընդհանուր կառավարութեան խնդիրներից գատ հետեւեալ կարգի հարցերով. ա) Տընտեսական խնդիրներ և գանական հաստատութիւններ. բ) Տաճարի բարեկարգութիւն և կրօնական միմիթարութիւն. գ) Բանակցութիւն կառավարութեան հետ. դ) Թեմերի կարգաւորութիւն և սրտակից յարաբերութիւն միւս բարձր աթոռների հետ:

## 2

Տնտեսական խնդիրների մէջ առաջին տեղն են բոնում կաթուղիկոսարանի և միարանութեան պէտքերի հոգացողութիւնն ու մատակարարութիւնը. պոհուած է միարանական սեղանատունը, վարիչն է Տ. Եղիչէ վարդապետ, որ Վանական կառավարութեան հետ գնում է հարկաւոր նիւթերը և պահում մթերանոցում հետրզհետէ գործադրելու համար: Նա ունի իր գնումների և գործադրութեան մատեանը, որ միշտ ենթարկեւում է նախ վերստուգչի և ապա Գ. Հ. Խորհրդի հաջուետեսութեան: Շտեմարանում հաւաքում է ջրաղացից եկած աղունավարձը կամ տորզսինից գնուած ալիւրը՝ նախ Սահակ վարդապետի և այժմ Յովհաննէս վարդապետի տեսչութեամբ, ենթարկուած վերստուգչի հսկողութեան: Անցեալ 32/33 թուականին ջրաղացների եկամուտը համեմատարար լաւ էր. բաւարարում էր ոչ միայն վեհարանի և միարանութեան հացի կարիքներին, այլ և այնտեղից նպաստ էր տրում միարանութեան մասնաւոր պէտքերի համար: Բայց մի տարի է, զրեթէ, որ շատ պակասել է արդիւնքը, այնպէս որ Գ. Հ. Խորհուրդն ստիպուած էր զգուշութեան և յանկարծակիր չգալու համար տորզսինից որոշ քանակութեամբ ալիւր գնել տալ. ստիպուած էր կրծատել նաեւ միարաններին որպէս նպաստ նշանակած ալիւրի կամ ցորենի տուչութիւնը:

Վանքի տնտեսութեան գործադիր մարմինն է Վանական կառավարութիւնը՝ Տ. Թաղէսոս եպիսկոպոսի և Դանիէլ ծ. վար-

դապետի անդամակցութեամբ, որոնք եւ հսկում են ջրաղացի վերայ, սեղանատան առուժախում կատարում, չենքերի նորոգութեան հսկում ևայն, վերստուգչի եւ Գ. Հ. Խորհրդի վերին հսկողութեամբ:

Միաբանութիւնը բացի ճաշից ստանում է ամսական դրամական փոքրիկ ոսճիկ, որ բաշխուում է ըստ այսմ. Խորհրդի անդամները, ինչպէս և Տ. Մեսրոպ, Բագրատ և Մատթէոս արքապիսկոպոսները, Վեհափառ Հայրապետի հաճութեամբ ստանում են 120 ր., պաշտօն ունեցող եպիսկոպոսները 90 անպաշտօնները 80, պաշտօն ունեցող վարդապետները 70, իսկ անպաշտօնները 60 ր.: Վերջինների չափով էլ ստանում են որպէս նպաստ նիկողայս վարդապետ Հին Նախիջևանի գործակալը և Հաղպատի վանահայր Զարարիա վարդապետը: Իստ հանգամանաց և հարկի ճանապարհածախս և նըսպաստ է տրուել և թեմական առաջնորդներից նրանց, որոնք տեղական կեամուտներով հնարաւորութիւն չեն ունեցել հոգալու իրենց անհրաժեշտ պարէնը, ամսական 100, 200 և 300 բուրլու սահմանների մէջ: Միաբաններին 32/33 թ. տրուել է մէկական փութ, բացառարար և 2 բութ ցորեն կամ ալիւր սննդեան և այլ կարիքների լրացման համար, որ հնարաւոր չէր միայն ստացած ամսականով հոգալ: Բաշխուել է երբեմն երբեմն և թէյ, չաքար, սապոն, սպիտակեղէնի կտորներ և մի մի ձմեռուայ վերարկուացու, որ նուէր է ուղարկուած կոնդոնի համայնքի կողմից. միաբաններից մի երկուուր դեռ չեն ըստացել: Հիւանդ միաբանների համար բժիշկ է հրուերուած, գեղեր հոգացուած և զուրուրժէկուելու զնացողներին համեստ նպաստ նշանակուած: Մի անգամ էլ Վեհափառ Հայրապետի օծման տարեղարձի առթիւրաշուած է իւրաքանչիւրին 5-10 դոլար աստիճանի և զիրքի համեմատ:

Այս տեղեկութիւններից երեսում է, որ միաբանութիւնը բաւարարուած է նիւթեական կողմից համեստութեան սահմանների մէջ և ներկայ պայմանների թելագրութեան համեմատ, առաջին օրինակը ինքը Վեհափառ Հայրապետը տալով, որ կամովին հրաժարաւել է սուանձին խոհանոց ունենալուց և բաւականանում է ընդհանուր սեղանատանը պատրաստուած ճաշ-

շերով, մթերքների համեմատական չափով  
եղած բաշխումով և իրեն տրամադրելի  
ամսական 250 րուբլով, բացի սպասաւոր-  
ների սոճկից, որ հոգացում է վանքի  
կողմբց:

Զնայելով Աթոռի սուզ միջոցներին,  
չեր կարելի անտարբեր մնալ զէպի զիւ-  
զական քահանաներից շատերի կարիքա-  
ւոր վիճակը. այս մէկ ու կէս տարուայ  
ընթացքում հետզհետէ նպաստ է տրուել  
այդպիսիներին մօտ 10,000 ր., բացի սո-  
րանից, և առհասարակ կարուանեալ ընտա-  
նիքների օգնութիւն է եղած ալիւրով, ցո-  
րենով, հնարաւորութեան սահմանների  
մէջ, վեհափառ Հայրապետի կարգա-  
դրութեամբ:

Արո՞նք են եկամախ ազրիւները: Տա-  
ճարը իւր մոմավաճառութեամբ և պատո-  
հական փոքրիկ նուէրներով հազիւ կարո-  
ղանում է ծածկել իւր ծախսերը՝ մոմի,  
մաքրութեան, սպասաւորների և երգիշ-  
ների համար. իսկ Միութեան թեմերից,  
չատ քիչ, զրեթէ ոչինչ օգնութիւն է զա-  
լիս, որովհետեւ թեմուկան եկեղեցիներն ու  
համայնքները իրենք դժուարութեամբ կա-  
ռավարուելու վիճակի մէջ են. դեռ առաջ-  
նորդներից ոմանց, ինչպէս յիշեցինք,  
նպաստ է ուղարկուում Մ. Աթոռից: Մեր  
գրամական եկամուտը ջրաղացների աղու-  
նավարձն էր, որ այս անցած տարին չատ  
պակասել է, մինչեւ իսկ ոչ բաւարար միա-  
բանութեան հացը հոգալու, և առա վան-  
քի բակում եղած փոքրիկ բանջարանոցը,  
որտեղից հոգացում են սեղանատան պէտ-  
քերը: Վանքի և Աթոռի պահպանութեան  
գլխուոր միջոցները մնում են մեր արտա-  
սահմանեան հայութեան կամաւոր նուէր-  
ները, որ ի հարկէ, գրձեալ չատ համեստ  
են կարիքների համեմատութեամբ: Բայց  
եթէ հնարաւոր է եղել առանց զրկանքի  
պահել միաբանութիւնը, վեհարանը և հո-  
գալ մնձ տան հետ կապուած ծախսերը,  
այդ պէտք է բացատրել Ս. Հայրապետի  
ընտրութեան և օժման հետ կապուած բա-  
ցառիկ նուիրատուութիւններով: Այդ առ-  
թիւ ստացուած է 40 անգլ. ֆունտ ստեր-  
լինգ և 518 դոլար, որից 390 դոլար հո-  
գացել է Փարիզի եկեղեցական Հոգարար-  
ձութիւնը, 100 դոլար ստացուած է Ամե-

րիկայի արեւելեան թեմի պատգամաւոր  
Հայի Ամսարեանից, 20 դոլար Փարիզի  
պատգամաւոր Լեոն կիւմիշկերտանից, 20  
ֆ. ստերլինգ Երուսաղէմի պատգամաւոր  
Միլանում ապրող Թորոս Մարմանեանից,  
15 ֆ. ստերլինգ Ֆլունելի Հայ համայնքից՝  
Տ. Մատթէսո եպիսկոպոս Խնձէյեանի միւ-  
լոցով, և մնացած գանադան անձերից:

Ընտրութիւնից յետոյ, բայց գարձեալ  
նոյն առթիւ, հետզհետէ ստացուած են հե-  
տեւեալ զումարները. Եզիապասից՝ նորըն-  
ձայ Տ. Մամբրէ եպիսկոպոսի ձեռքով 270  
ր. 27 կ. տորգոսինի բոներով և 8 դոլար,  
իրաքի թեմից՝ Տ. Առուբէն եպիսկոպոսի  
ձեռքով 44 ֆ. ստերլինգ. Ամերիկայից՝  
հանգուցեալ Ղեոնդ արքեպիսկոպոսի ձեռ-  
քով 924 դոլար, Սուրարայայի հեռուոր  
համայնքից 5 ֆ. ստերլինգ, Յունաստանից  
103 ր. 41 կ. տորգոսինի բոներով, Բուլղա-  
րիայից նոյնպէս 42 ր. 30 կ., Նիւ-Եորքից  
Միլանու թիրաքեանից 16 ր. տորգոսինի,  
Աղեքսանդրիայից այրի տիկին Զարուհի  
Եկառութիւն մի վ. ստերլինգ:

Իրեւ արձագանք Աղգային-եկեղեցա-  
կան ժողովի, որ Կիլիկիոյ տան կաթողի-  
կոսների և պատրիարքների ու շաղրա-  
թիւնն էր հրաւիրում Մ. Աթոռի նիւթա-  
կան ծանր վիճակի վերայ, ստացուած է  
Շնորհազարդ կաթողիկոսներից՝ իրենց աղ-  
քատիկ գանձանակից 50 ֆ. ստերլինգ,  
որպէս եղբայրական օգնութիւն. թէպէտ  
ոչ ժողովի և ոչ նորընտիր Հայրապետի  
ցանկութիւնն էր այդ ձեռք ծանրանալ՝  
առանց զորան էլ նրանց նիւթական սուզ  
միջոցների վերայ. հրաւէրը բարոյական  
աջակցութեան մասին էր միայն, բայց  
Շնորհազարդ կաթողիկոսների այդպիսի  
վերաբերմունքը զէպի Մ. Աթոռը թանգ  
պիտի ցնահատուի, և մենք կը կամենա-  
յինք, որ Հայաստանեայց եկեղեցու բոլոր  
հարազատների ու շաղրաթիւնից չըրիսէր  
այդ իրողութիւնը: Երուսաղէմի պատ-  
րիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս իւր  
թեմերի մէջ կազմակերպել է Առուսաւորչի  
Լումայո տարեկան հանգանակութիւն, ո-  
րով գոյացել է 100 ֆ., սորա վերայ աւե-  
լացնելով վանքի բիւջէից ևս 50 ֆ., խոս-  
տանում է տարեկան ուղարկել 150 ֆ.,  
որ չատ զգալի օգնութիւն կը մնի: Յու-  
զիչ է նաև Ամերիկայից՝ Նիւ-Եորքում

բնակուող Գրիգոր Տէր Գրիգորեանի նամակը, որի հետ ուղարկում է յիսուն դոլարի մի չեք ի պահպանութիւն Աթոռի, ինքը չինելով առանձնապէս հարսուս, որդիական պարտականութիւն է համարում ամենայն տարի նոյն գումարի առաջումը, որքուն Տէրն իրեն հնարաւորութիւն կ'տայ:

Հարիւր փունտ էլ ստացուած է Կալկաթայից կամածնին կտակուած գումարի տոկոսներ:

Այսպիսով մեր եկամուան է եղած 1508 ֆ. ստ., 1450 դոլար և 431 ր. 98 կ. տորգունի բոներ:

## 3

Մի քանի խօսք էլ Արգարեան հիմնադրամի մասին: Դեռ ևս հանգուցեալ կաթուղիկոսի ժամանակ այս հիմնադրամի օգտագործման և զործադրման յատուկ կանոնադրութիւն է մշակուած, որով տարեկան տոկոսների  $\frac{1}{3}$ ը թողնուած է Լոնդոնի կեղրունական Յանձնաժողովի տրամադրութեան տակ ըստ հայեցողութեան զործադրելու կտակի թելադրութեան համաձայն, բայց նախահաշուի հաստատութիւնն ունիափառ Հայրապետից ստանալուց յետոյ, հաշուետու լինելով նաև յետ կատարման, իսկ մնացած  $\frac{2}{3}$ ը բաշխուում է Ն. Արքութեան կողմից: Բարձր գնահատութեան արժանի մի զործ է առ, անմահացնելու հանգուցեալ կտակարարի յիշատակը, որով Ամենայն Հայոց կաթուղիկոսի տրամադրութեան տակ տարեկան մի որոշ զումար կայ, իւր հայրական օդնութեան ձեռքը հասցնելու հեռաւոր և մերձաւոր որբերին, չքաւորներին, արկածեալներին եւ նրանց պահպանութեան եւ զաստիարակութեան նուիրուած հաստատութիւններին: Զհաշուած այն 10,000 ֆ. ստերլինգը, որ միանուագ դրուած էր հանգուցեալ կաթուղիկոսի տրամադրութեան տակ, որ նա էլ յանձնեց Հայաստանի կառավարութեան զործադրելու Լուկաշէն կոչուած, որբերից կազմուած գաղութիշնարարութեան, տարեկան տոկոսներից ես բաշխուած է 11,000 ֆ., որից 5000-ը արտասահմանից եկած և Հայաստանում հաստատուած գաղթավայրերի շինութեան և նրանց որբախնամ զործին, իսկ մնաւ-

ցածը արտասահմանի որբախնամ հաստատութիւններին և դպրոցներին:

Հետեւեալ ցուցակը պարզ գաղափար է տալիս բաշխումների մասին.

ա) Միւրիայի գաղթականութեան որբերին, այրիններին և արկածեալներին՝ հինգ նուագում 1930 թուից սկսած 1900 ֆ.:

բ) Յունաստանի որբերին և այրիններին հինգ նուագում 800 ֆ.:

գ) Կ. Պոլսի՝ հինգ նուագում 700 ֆ.:

դ) Փարիզի Դպրոցաւէր Տիկնանց Միւթեան՝ հինգ նուագում 500 ֆ.:

ե) Ժընեվի որբանոցին (Կրաֆտ-Բոնար)՝ հինգ նուագում 450 ֆ.:

զ) Լոնդոնի Աղքատախնամին՝ հինգ նուագում 250 ֆ.:

ի) Թաւրիզի հայ որբերին և այրիններին՝ երկու նուագում 200 ֆ.:

լ) Նոր Զուղայի որբերին և այրիններին՝ երեք նուագում 550 ֆ.:

մ) Պալսի Գալֆայեան որբանոցին՝ երկու նուագում 100 ֆ.:

դ) Փարիզի Հայ կանանց Միւթեան 50 ֆ.:

ճա) Մուսուլի եկեղեցու կառուցման 50 ֆ.:

ճբ) Լոնդոնի Հայ Տիկնանց Միւթեան 10 ֆ.:

ճգ) Լիոնի Հայ Մայրերի Միւթեան 50 ֆ.:

ճդ) Տելինի եկեղեցաւէր Տիկնանց Միւթեան 50 ֆ.:

ճե) Լիոնի եկեղեցու շինութեան 50 ֆ.:

ճզ) Պէրպէրեան վարժարանին (Եզիպատու) նպաստ 50 ֆ.:

ժե) Էջմիածնի սան Ռ. Պետրոսեանին երկու նուագում 240 ֆ.:

ժը) Խորհ. Հայաստանի որբերին եւ գաղթավայրերին, կառավարութեան յանձնուած՝ երկու նուագում 5000 ֆ.:

ժը) Միանուագ նոյն նպատակով կառավարութեան յանձնուած հանգուցեալ կաթուղիկոսի ժամանակ 10,000 ֆ.:

Ընդամենը 21,000 ֆ.:

## 4

Տաճարի տարեկան եկամուտը մոմավաճառութիւնից և կամաւոր նուէրներից անցեալ 1933 թուին եղել է մօտաւորա-

պէս 15,000 ր., որ գործադրուել է սպասաւորների և երգիչների վարձատրութեան, մոմի և այլ կարիքների վերայ: Լուսարարապետն է Տ. Դէորդ արքեպիսկոպոսը՝ թաղէս և պիտիոպոսի և Տիրոյց վարդապետի օգնականութեամբ, որ կառավարել է առօրեայ ժամերգութիւնը, հանդիսաւոր արարութեամբ և պատարազները և բաւարարել բարեպաշտների կրօնական պահանջներին: Պահուամ է երգեցիկ փոքրիկ խումբ թաղէս և պիտիոպոսի զեկավարութեամբ, հարսիրուած են և երկու ձայնեղքահանների, որոնք միաբանութեան անդամների հետ օգնել են ժամերգութեանը: Քարոզներ աւանդական սովորութեան համաձայն խօսուել են հանդիսաւոր օրերին և մեծի պահոց կիւրակիններին վեհափառ Հայրապետի կամ լուսարարապետի նշանակութերով: Այսուեղ, միջանկեալ կերպով, կարող ենք աւելացնել նաև, որ մեծ տօներին ևս, ուր առաջնորդական աթոռը թափուր է եղել ժամանակաւորապետս: ուղարկուել են և պիտիոպոսներ, հանդիսաւոր պատարագով և քարոզներով միմիթարելու բարեպաշտ ժողովրդեան:

Բայց մի մեծ հոգս ծանրացած է վեհափառ Հայրապետի և Գերազոյն Խորհրդի անդումների վերայ: որ դարաւոր տաճարի չենքի պահպանութեան և բարեկարգութեան խնդիրն է. տարաբաղդաբար, արդէն քանի տարի է կաթում են մեր երկու արենելեան խորանները և խոնաւութիւնն հետզհետէ անցնում պատերին: բացի ներքին բարեկարգութիւնից՝ կտուրն ամրողապէս կարօտ է նորոգութեան: Տեղական և սովորական միջոցներով ոչ մի համարւորութիւն չունինք այդ գործը կատարելու, առանց արտասահմաննեան հայութեան յատուկ օգնութեան, որի համար վեհափառ Հայրապետը միտք ունի առանձին կոնդակով զիմելու, երբ հնարաւոր կը լինի իւր ներկայացուցիչն ուղարկել այստեղ:

## 5

Վեհափառ Հայրապետի կարեոր հոգացողութեան խնդիրներից մէկն է եղել բանակցութիւնը կառավարութեան հետ, ծագած դժուարութիւնը:

Եկեղեցու վարչական և այլ գործերը կանոնաւորելու համար: Արդէն վերեւ յիշուեցաւ, թէ ներկայացուցիչն է բանակցող էր նշանակուած Տ. Դէորդ արքեպիսկոպոսը, որ յաճախ դիմել է Հայաստանի կառավարութեան, երբեմն և Վրաստանի կամ Անդրկովկասի միութեան բարձր իշխանութեան, խնդրի բնաւորութեան նայելով, միշտ խնդրանքներ և ցուցումներ ստանալով վեհափառ Հայրապետի կողմից: Բարեկարգդաբար զիմումների մեծ մասը գըրական ելք են ստացել և հարթուել թիւրիմացութեամբ կամ որ և է պատճառով ծագած խնդիրների, քահանաների վիճակի և նրանց հարկերի թեթևութեան, թեմական պատգամաւորական ժողովների գումարման և խորհուրդների կոմմ առաջնորդներ ընտրելու նկատմամբ: Զենք ուզում մանրամասաներ ջրազացների հարկերից անցեալ տարի 20,000 ր. զեղչումը կամ անհրաժեշտ մթերքների և նիւթերի ըստացումը կառավարութեան համապատասխան հաստատութիւնների կարգադրութեամբ, որ անկարելի կը լինէր մեզ զնել կոռպերատիւ խանութներից:

## 6

Առանձնապէս դժուար կացութիւն է ստեղծուած մեր արտասահմաննեան թեմերի մէջ կուսակցական անզուսպ պայքարների հետեանքով, երբեմն մինչև իրար վնասելու աստիճանին հասած: Եւ այդ դժբաղդ երեսոյթը մեծ կամ փոքր չափերով կրկնուած է մեր բոլոր թեմերում: սկզբում Բալկաննեան պետութիւնների թեմերում, ինչպէս Յունաստանն է, Բուլգարիան և Ռումինիան: Տէր Յուսիկ արքեպիսկոպոսի զէմ միումնիայում կուսակցական հոգի վերայ պայքարը էր սկսուած, և մինչև իսկ կառավարութեան ներկայացրած, որպէս հակասահմանադրական: Բայց նորան յաջողուեց թեմական պատճառաւորական ժողով գումարել, ամբաստանութիւնները հերքել և հետզհետէ խաղաղութիւն հաստատել:

Տարաբաղդաբար մի շատ կարեւոր հարց, Քիչնեի կալուածների վէճի հարցը, որ երեան է եկել պատերազմի տարբիններին, մինչև օրս իւր արգար լուծումը

չէ ստացել: Այդ կալուածը հաստատուն հրովարտակով նուիրուած է Քիշնեի առաջնորդաբանին, բայց կապալառուն ինչ ինչ ձեւական հիմունքներով կառավարութեան ներկայացրել է իրեւ լզմիածնի կալուած, իսկ ոռոմինական օրէնքներով օտար երկիրներում եղած վանքերը իրաւունքնին այնտեղ կալուած ունենալու: Այդ պատճառով էլ միծ կալուածի եկամուտները իրեւ վիճելի՝ դեպովիտ է մնում պետական բանկում մինչև դատի վերջնական լուծումը:

Բուլգարիայի թեմում ևս խլրում էր յուած եկած մասամբ առաջնորդի ծերութեան և մասամբ հուազոյն զեօչակի պատճառով: Նորընտիր խորհուրդը կամ կեղրօնական վարչութիւնը իւրաքի հրաժարեցրած է հրատարակում ծերունի և ժողովրդանուէր Տ. Ստեփանոս արքեպիսկոպոս Յովակիմեանին և տեղապահ ընարում Տ. Երուանդ Կալիսկոպոս Փիլորիահանեանին: Գերագոյն Խորհուրդը հակօրինական համարելով այդ գործողութիւնը, վերականգնեց առաջնորդի իրաւունքը, գէմ չլինելով, որ Տ. Երուանդ Կալիսկոպոսը լինի որպէս տեղապահ և օգնական տոաջնորդի: Սակայն Ստեփանոս արքեպիսկոպոսի մահուամբ խնդիրն ինքնին լուծուեցաւ, և հեռագրուեցաւ Երուանդ Կալիսկոպոսին, որ Լիոն էր զնացած յատուկ յանձնաբարութեամբ, վերջաւորել այնտեղ իւր գործերը և վերադարձ յայտնաբարութեամբ, մինչև վերջնական բուլղարիա, վարելու առաջնորդական պաշտօնը:

Անկերպարան վիճակի մէջ է և Եւրոպայի թեմը: Տեսականապէս այդ թեմը մի ամբողջութիւն պիտի կազմէր Փարիզի, Լիոնի և Մարսէլլի շրջանների և ապա Լօնդոնի և Մանչեստրի համայնքների հետ և Բալաքեան Տ. Գրիգորիս Կալիսկոպոսն իրեւ կաթուղիկոսական պատուիրակ զըլիսաւորէր թեմը: Բայց պաշտօնավարութեան անյաջոտ ընթացքի հետեանքով թողեց և հաստատուեցաւ Մարսէլլում, իւրովի իրեն առաջնորդ հոչակելով շրջանի համար, առանց ընդունուելու գաղութի մի մասի կողմէց, մինչև որ վերջերս հետագրով իւր հրաժարականը յայտնաց:

Աւելի բաղդաւոր վիճակի մէջ չէր Լիոնի շրջանը, նոյնպէս անվերջ վէճերի վայր գործած և համայնքները երկուսի

բաժանուած: Գերագոյն Խորհուրդը ն. Արքութեան հաճութեամբ Տ. Երուանդ եւ պիտօպոսին Բուլղարիայից յատու յանձնաբարութեամբ Լիոն ուղարկեց, որ պէտք է աշխատէր համայնքի միութիւնը հաստատել մի նոր, անկուսակցական վարչութիւն կազմակերպելով, պարզել նաև շըրջանի եկամուտները, թէ հնարաւո՞ր է առանձին փոխանորդութիւն հաստատելու, թէ ոչ: Տ. Երուանդ Կալիսկոպոսին յաջողուել է չէղոք հողի վերայ մի նոր վարչութիւն ստեղծել, որ Լիոնի շրջակայիքի ներկայացուցիչների միացմամբ կեղբունական վարչութիւն պիտի ամբողջ լինի ամբողջ շրջանի համար: Արգարեան քոնդից էլ ն. Վեհակառակութիւնները պիտի լինի ամբողջ շրջանի համար և Արգարեան քոնդից էլ ն. Վեհակառակութիւնները պիտի վերջանան երկպատութիւնները և միութիւն պիտի ստեղծուի շրջանի բոլոր հատուածների մէջ, մինչև վերջնականապէս կարելի լինի կարգուորել Եւրոպայի թեմի խնդիրը:

Բայց Երկպատութեան հողի վերայ ամենադժուար կացութիւնն ստեղծուած էր Ամերիկայի արևմտեան և արեւելեան թեմերում: Կարիքութիւնների թեմի առաջնորդ Տ. Գարեգին Կալիսկոպոսը կառամենաց պաշտօնավարութիւնը լրացած լինելով, Երեսփոխունական ժողովի մէջ երկու հօսանք է զոյանում: մի մասը նիւթեապէս անկարելի համարելով ուրոյն առաջնորդի պահպանութիւնը, կամ մինում է տեղապահութեամբ միայն կառավարուել (սրոշում 1932 թ. սեպտ. 24-25), միւս մասը հակառակը պաշտօնելով՝ վերջնարում է Տ. Գարեգին Կալիսկոպոսին առաջնորդ (1933 թ. գետ. 19): Գերագոյն Խորհուրդը ծանօթանալով երկու ժողովների գումարմատն պայմաններին և որոշումներին, երկուսն էլ չեղեալ է համարում և երեսփոխունական նոր ժողով նշանակում, կողմերին յորդորելով համերաշխութեան: Դորա հետեանքով 1933 թ. գեկտ. 13 ին երկու կողմերի համաձայնութեամբ նոր կեղբունական վարչութիւն է կազմում Գեղամ վարդապետ Վասիլիսեանի ժամանակաւոր տեղապահ հորդութեամբ, մինչեւ

երեսփոխանական նոր ժողովի գումարումն ու վէճի առարկայ եղած խնդրի լուծումը:

Բայց կրքերը ծայրահեղութեան հասան և երկպառակութիւնը ցաւալի վախճան ունեցաւ յատկապէս Ամերիկայի արեւելեան թիւմում, որ ինչպէս յայտնի է Տ. Ղեոնդ արքեպիսկոպոսի մահումը վերջացաւ: Երկպառակութեան թանձրացեալ առիթը հսկոյն զրօշակի գործածութեան խնդրն է եղել: Դաշնակցական կուսակցութիւնը կամեցել է Զիքակոյի արուեստահանգիսի հայկական օրը կամել այդ զրօշակը իրեւ ազգային զրօշակ: բայց Գործազիր Յանձնաժողովը անյարձար է համարել արդ՝ երկպառակութեան առիթ չստիգմեցելու համար, քանի որ այդ հոգի վերայ վէճեր են ծագել գաղութահաւայութեան ուրիշ հատուածներում: Առաջնորդը, որ հրաւիրուած է եղել նախագահելու օրուայ հանդիսին, այդ պայմանների մէջ միայն իւր համաձայնութիւնն է տուել: Ահա այս խնդրի շուրջն է, որ պայքարը ծայրայեղութեան է հասել և կրքերը օրել:

Գիրազոյն Հ. Խորհուրդը Յանձնաժողովի տեսակէտը ուղիղ համարելով և կամենալով խուսափել զժոտութիւնը խորացընելու առիթներից, խնդրում է Ն. Վեհափոսութեան յատուկ կոնդակով լուսաբանել զրօշակի գործածութեան հետ կապուած անպատեհութիւնները ու զգաստութեան և խոհեմութեան հրաւիրել յուղուած մտքերը: բայց կոնդակը տեղ չհասած, սեպահմերելի 2-ին գումարւում է Նիւ-Եսորքում երեսփոխանական ժողովը, որ երկու մասի է բաժնուում և երկու տարրեր վայրերում գումարւում: Դաշնակցական կամ նրանց համակիր պատգամարդներից զումարուած ժողովը առաջնորդին պաշտօնանկ է հրատարակում, իսկ Մարթինիկ հօտելում գումարուածները պաշտպանում և հաւանութիւն տալիս նորա ընթացքին: Գիրազոյն Հ. Խորհուրդը քննելով իւր ստացած բոլոր զրութիւնները, ճանաչում է ապօբինի 27-րդ փողոցի եկեղեցու ժողովը և նորա օրոշումը առաջնորդին հրաժարեցնելու նկատմամբ՝ անվաներ, բայց և թերութիւններ զանելով Մարթինիկի ժողովի գումարման մէջ, կարգադրում է Տ. Ղեոնդ արքեպիսկոպո-

սին՝ պատեհ Ժամանակին երեսփոխանական նոր ժողով հրաւիրել իւր նախագահութեամբ և աշխատել մի յայտարարի բիրել պառակտուած երեսփոխանութիւնը:

Տարարազգարար կրքերի բարրոքումը իւր տիսուր հետեւանքն է ունենում Տ. Ղեոնդ արքեպիսկոպոսի եղերական մահուամբ, երբ Ա. Խաչ եկեղեցու հոգաբարձութեան հրաւիրմամբ, զգեստաւորուած եկեղեցի էր մտնում թափօրով՝ պատարազեցու: Այս ցաւալի եղեղութեան առթիւնը Արքութիւնը տալիս է յատուկ կոնդակի, գատապարտելով անլուր եղեանագործութիւնը, Մամբրէ վարդապետ Գալֆայեանին ժամանակաւոր տեղապահ նշանակում, պատուիրելով զործել հանդուցեալի նախագահութեան ու համարել եղած վարչութեան հետ, իսկ հակառակ ընտրուած վարչութեան պատուիրում զաղարեցնել իւր զործունեութիւնը և հնթարկուել հայրապետական կարգադրութեան, սաստում է նաև զգաստանալայն հոգեսրբականներին, որոնք իրենց ընթացքով, համերաշխութեան փաստարէն, նպաստում են երկպառակութեան և թըշնամութեան խորացման:

Դրութեան վերջին փուլի մասին զեկուցում կ'անէ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը:

## 7

Սակայն մեր արտաստհմանեան հատուածներից ունինք և ուրախ տեղեկութիւններ յայտնելու: այդ այն եղբայրական և սրակից յարաբերութիւնն է, որ ստեղծուած է մերնուիրապետութեան բարձրագոյն աթոռների ներկայացուցչիների մէջ: Նորին Արքութիւնը իւր օրհնութեան անդրանիկ կոնդակի մէջ արդէն նշել էր այդ գիծը, իւր գնահատող վերաբերմունքը գէպի կիլիկիոյ տան զոյդ կաթուղիկուների անձնաւորութիւնը, գէպի երուսաղմէի և Կ. Պոլսոյ աթոռներն ու նրանց արժանաւոր պատրիարքները: իսկ այնուհետեւ նրանց մէջ փոխանակուած պաշտօնական և մասնաւոր բնոյթ կրող զրութիւններով մշակուել է աւելի սերտ և եղբայրական յարաբերութիւն:

Միւրիկ ժողովով հիւրընկալ երկնքի տակ տեղաւորուած է կիլիկիոյ զաղթականութիւնը իւր զոյդ կաթուղիկուների

հովանաւորութեան տակ, հետամուտ՝ նիւթականի հետ՝ բարւոքելու իւր եկեղեցիներն ու զպրոցական-կրթական հաստատութիւնները։ Մեր Արքազնազոյն Կաթողիկոսն էլ ըստ ամենայնի իւրը համարելով նրանց յաջողութիւններն ու կարիքները՝ իւր կողմից Արգարեան ֆոնդի հաշումն հետզհատէ օգնութիւն է հասցրել 1900 ֆառերլինգ, թեթեացնելու որբերի և այրիների, կարօտեալների և արկածեալների (Քէյրութում այրուեցաւ փայտէ մի ամբողջ թաղամաս, ուր մեր զաղթական եղարայրներն էին բնակուած) վիճակը։ Խոկ Շնորհագարդ Տ. Սահակ և Տ. Բարդէն կաթողիկոսների եղբայրական յարաքերութեան ապացոյցը և սրտացաւութիւնը գէպի Մ. Աթոռը տեսանք վերև։

Երուսաղեմի աթոռը կրօնական կեդրոնիներուց զատ՝ հանգուցիալ Եղիշէ պատրիարք Դուռեանի և այժմ Տ. Թօրփոմ պատրիարքի կառավարութեամբ դանում է մեր եկեղեցու համար առաջնակարգ մտաւոր կեդրոն, իւր ժառանգաւորաց կարգաւորեալ զպրոցով, «Ախոն» ամսաթերթով, Դուռեան շարքի հրատարակութիւններով և Արքոց Թարգմանչաց — Դուռեան Գրական մրցանակաբաշխութեամբ։ Ամենապատիւ պատրիարքի և միաբանութեան սիրոյ ապացոյցը գէպի Մ. Աթոռը նոյնպէս յիշատակուեցաւ վերև։

Կ. Պալսոյ Ամենապատիւ պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նարսիկանն էլ ոչ մի առիթ չի փախցրել իւր յարգանքը մատուցանելու գէպի Մ. Աթոռը և նորագահակաները, թէ հանգուցիալին և թէ նորընտիր Հայրապետին, չնայելով ծանր վիճակին՝ նիւթական օգնութիւն ևս հասցընելով։

### ԽՐԱԶԵԿ

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

### ԱՄՍՈՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցեալ 0 գոստոս ամսոյ ընթացքին Ա. Աթոռոյու Տիուելն Փաղովը ի նիստ զումարուեցաւ իրեւ վարչական Մարմին տասնըմէկ անգամ, իսկ իրեւ Կրօնուկան Անեան չըրս անգամ, նոյնուկ Աւումանական Խուհուեղը երկու անգամ, իւրաքանչիւրը զրագելով իր իւրաւասութեան մէջ եղած խնդիրներով։

♦ Եշ. 2 0 գոստ. — Հնդկաստանի Աւզավար Ասորի Եկեղեցւոյ Պետք Մարտ Մարտիին որ գացած էր Անտոնք Հարթելու վարչական անհամաձյունութիւններ, երկու քահանաներու հետայցելց Պատրիարքարանս, Ա. Պատրիարքը Հայրը Եպիսկոպոսներով և Վարզապետներով զինքը ընդունեց Պատրիարքարանի նոր կահաւորուած փոքրիկ գահնիքնին մէջ։ Երկու Եկեղեցիներու մասին փոխագարձ ծանօթութիւններ տառնայէ ետք Արքազան հիւրը, Լուսարարապիհան Մեսրոպ Արքազանի առաջնորդութեամբ, Մայր Տաճարը իշաւյուած ե երկրագութիւններ և մեկնեցաւ Այն Քէրիմի Խուսաց վանքը ուր կը կենայ հիւրաքարար։

— Երեկոյեան ժամերգութենէն եաքը Ա. Յակոբայ Տաճարին մէջ Արքազան Պատրիարք Հայրը զպրութեան չըրս աստիճաններ տուաւ ժառանգաւորաց տասնեօթ սաներու և յիսոյ կիսասարկաւագութեան աստիճան տուաւ անոնցմէ երեքին։ Այս հոգեսոր շնորհարացխութենէն եաքը ժառանգաւորաց Արակին մէջ, նախազանութեամբ Ա. Պատրիարքին և իներկայութեան Միարանութեան և ուսուցիչներու, տեղի ունեցաւ ժառանգաւորաց գարդի զպրոցական մրցանակաբարչութեան հանդէ եղան ճառեր և երգեր, իսկ Տիուել Տ. Տիրան Վրդ. կարգաց գարուցին կրօնական, կրթական և ժարշական վիճակին ներկայացնող տեղեկագիրի մը, յիսոյ Ա. Պատրիարք Հայրը մրցանակներ տուաւիրաքանչիւր գաստարանի կրօնագիտական, հայագիտական, եղուներու և զարք ու բարքի մէջ առաջին եղագներուն Հանդէսը վերջացաւ Արքազան Հօր խարտականութե պահպանիչով։

Այս հանդէսը փակումն էլ տարեկան քննութիւններուն որ տեղի ունեցան անցնող Ցուլիսամսութեան 17-26 ին, մեծաւ ժառանգ որպատոր Ա. Պատրիարք Հայրը անհամը ներկայ եղաւ լեզուներու ըերանացը քննութեանց և մօտէն հետաքրքրուեցաւ զպրոցի կրթական կեանքով եւ իր գոհունակութիւնը յայտնեց Տիուել հանդէսականութեան աշխատաւթեան, զպրոցին յառաջդիմութեան համար։

♦ Ելք. 5 0 գոստ. — Ա. Պատրիարքը մատուցեւցաւ Ա. Յակոբայ Մայր Տաճարին մէջ, Ա. Պատրիարք Հայրը Սարկաւագութեան աստիճան ուղւաւ ժառանգաւորաց սաներէն Ազատ ինքոյեանի, Թովմաս ծէրէնեանի և նուղար Թէրզեանի, առաջինը տարի մը առաջ աւարտած էր զպրոցին ընթացքը եւ կը հետեւէր Սարկաւագաց Բ.